

Եվրոպայի իրական դեմքը՝ Գերմանիայի Նախագահ Շտայնմայերն իր պաշտոնական սոցցանցային էջում հրապարակում է օկուպացված Արցախի Հանրապետության դրոշի լուսանկարը, իսկ ժամեր անց պաշտոնական Բեռլինը ներողություն է խնդրում Բաքվից՝ Նախագահի պաշտոնական էջում «սխալ դրոշի» պատկերը հրապարակելու համար:

Ուրբաթ  
4 ապրիլի 2025թ.  
№ 7 (637)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
ԳԻԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47  
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468  
2 5 0 0 7 >  
9 771829 346006

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



## Ադրբեջանն օրեր շարունակ կրակում է Սյունիքի ուղղությամբ, իսկ այստեղ փարիսեցիների հանդես է

Մարտի 20-ից ադրբեջանցիները՝ տարբեր զինատեսակներից, կրակում են խոզնավար, Խնածախ գյուղերի ուղղությամբ:

Թեև մեկ-երկու օր դադար է եղել, բայց, կարելի է ասել, ադրբեջանական սադրանքները համակարգային բնույթ են կրում, ինչը կարող է և շարունակություն

ունենալ, բանզի ամեն օր հաթաթաներ ենք լսում Ադրբեջանի ամենաբարձր իշխանավորներից:

Շարունակությունը՝ էջ 7

## Կառուցվում է Հյուսիս-հարավ ճանապարհի Քաջարան-Ագարակ 32 կմ երկարությամբ հատվածը

Եղանակային պայմանների բարելավմանը զուգահեռ ավելի մեծ թափ են ստացել Հյուսիս-հարավ ճանապարհի Տրանս-4-ի Քաջարան-Ագարակ 32 կմ երկարությամբ հատվածի կառուցման աշխատանքները: Կապալառու կազմակերպությունը մեծացրել է իր ռեսուրսները: Հինհրապարակում աշխատում է 155 միավոր տեխնիկա, 248 աշխատող: Ներգրավված են նաև տարածաշրջանի բնակիչներ, ինչպես նաև տեղական շինարարական կազմակերպություններ՝ որպես ենթակապալառու, ինչը լուծում է որոշակի սոցիալական խնդիրներ: Բացի այդ, տեղի շինկազմակերպություններն ու մասնագետները, համագործակցելով միջազգային բազմաթիվ ծրագրերում մեծ փորձ ունեցող կապալառուի հետ, ձեռք են բերում մեծ փորձառություն, ծանոթանում նորագույն տեխնոլոգիաների նրբություններին:

Հինհրապարակում այս պահին իրականացվում են տարբեր բնույթի աշխատանքներ՝ հողային, պայթեցումներ, կառուցվում է հողային պաստառը և այլն: Ընթանում է Մեղրին



շրջանցող տրանսպորտային հանգույցներից մեկի կառուցումը. կատարվում է բետոնացում, կառուցվում են արհեստական կառույցների հիմքերը: Շարունակվում են նաև 360մ երկարություն ունեցող թունելի հորատման աշխատանքները. արդեն իսկ հորատվել է ավելի քան 180մ:

Քաջարան-Ագարակ ճանապարհը կառուց-

վում է ՀՀ կառավարության ու Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի համաֆինանսավորմամբ:

Ծրագրի շրջանակում նախատեսված է կառուցել 32 կմ ճանապարհ, երկու թունել և 17 կամուրջ, որոնցից ամենաերկարը 720 մետր է:

ՃԱՆԱՊԱՐԿՆԱԿԻ ԴԵՊՈՒՐՏԱՄԵՆՏ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ, 01.04.2025 թ.

## Ի. ԱԼԻԵՎ. «Եթե Հայաստանն իսկապես ցանկանում է խաղաղության պայմանագիր ստորագրել, «պետք» է ընդունի Ադրբեջանի երկու «օրինական» պահանջները»

Այսօրվա դրությամբ խաղաղության պայմանագրի տեքստը լիովին համաձայնեցված է և բաղկացած է 17 կետից: Ադրբեջանն այստեղ լրացուցիչ պայմաններ չի առաջադրում. այս մասին ասել է Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիև:

Սիևույն ժամանակ նա անդրադարձել է, որ խաղաղության պայմանագրի ստորագրման համար Բաքուն ունի երկու պայման:

«Մեր պայմանները Հայաստանին հայտնի են, դրանք նոր չեն: Մենք երկար ժամանակ առաջ ենք տանում այս պայմանները: Սակայն Հայաստանից դեռ լուրջ արձագանք չենք ստացել:

Նախ պետք է վերացնել ԵԱՀԿ Մինսկի խումբը:

Երկրորդ հարցը վերաբերում է Հայաստանի Սահմանադրությանը: Հայաստանի Սահմանադրությունը հղում է պարունակում Հայաստանի Անկախության հռչակագրին: Դա Սահմանադրության բաղկացուցիչ մասն է: Այնտեղ դրույթ կա, որ «Ադրբեջանի օրինական, պատմական տարածքը» միավորում է Հայաստանին, իսկ դա մեր նկատմամբ բացահայտ տարածքային պահանջ է: Ուստի այս դրույթի հանումը Հայաստանի Սահմանադրությունից մեր «օրինական պահանջն է»:

Երբ այս երկու պայմանները կատարվեն, խաղաղության պայմանագրի ստորագրման համար ոչ մի խոչընդոտ չի լինի: Ինչպես ասում են՝ գնդակը Հայաստանի դաշտում է:

Եթե Հայաստանն իսկապես ցանկանում է խաղաղության պայմանագիր կնքել, ապա «պետք է» ընդունի Ադրբեջանի այս երկու «օրինական» պայմանները», – ասել է Ալիևը: //

## Ե՞րբ կբացվի Ռուսաստանի գլխավոր հյուպատոսությունը Սյունիքում

Սյունիքում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսությունը բացելու հարցը քննարկվում է շուրջ 3 տարի:

Կապալառու Ռուսաստանի գլխավոր հյուպատոսությունը բացելու հարցը քննարկման փուլում է: Այս մասին հայտնում է ՀՀ արտգործնախարարությունը՝ պատասխանելով Sputnik Արմենիայի գրավոր հարցմանը:


Մենք հետաքրքրվել էինք, թե ինչ փուլում է գործընթացը, երբ է նախատեսվում դիվանագիտական ներկայացուցչության բացումը, ինչ աշխատանքներ են տարվում և ի՞նչն է պատճառը, որ հյուպատոսությունը դեռ չի բացվել:

«Ձեր կողմից բարձրացված հարցը գտնվում է երկու երկրների միջև. քննարկումների փուլում», – պատասխանել է ԱԳՆ-ն:

Հիշեցնենք, որ Սյունիքի մարզում ռուսական գլխավոր հյուպատոսությունը բացելու հարցը քննարկվում է շուրջ երեք տարի:

2023թ. սեպտեմբերից Կապալառու աշխատում է հյուպատոսության բացման նախապատրաստական աշխատանքների համար պատասխանատու առաջատար խումբը:

27.03.2025 թ.



# Ինչո՞վ է պայմանավորված եվրոպական երկրների դեսպանների ակտիվ շրջագայությունը Սյունիքում

## Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դըկոտիսյին կրկին այցելել է Սյունիքի մարզ

«Սկսում եմ բարեկամության, համերաշխության, աջակցության այցը Սյունիք: Սյունիքը Հայաստանի տարածքի անբաժան մասն է: Դրա բնակիչներն իրավունք ունեն ապրել խաղաղ, առանց անհանգստության և սպառնալիքների», – կշռել է դեսպանը X-ի իր միկրոբլոգում:

Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը եւ Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտիսյին մարտի 24-ին այցելել են Նորաստեղծ Սենթ Էթիենի անվան ֆրանկոֆոն կենտրոն:

Ողջունելով դեսպանի այցը Կապան՝ համայնքի ղեկավարը կարևորել է հայ-ֆրանսիական բարեկամական հարաբերությունները եւ շնորհակալություն հայտնել բարեկամ Ֆրանսիային՝ մշտապես Հայաստանի կողքին լինելու, ինչպես նաև Սյունիքի մարզի նկատմամբ ցուցաբերվող մեծ ուշադրության համար:

Համայնքի ղեկավարի ուղեկցությամբ դեսպանը շրջայց է կատարել ֆրանկոֆոն կենտրոնում, ծանոթացել ստեղծված պայմաններին, հետաքրքրվել մատուցվող ծառայություններով, գրուցել աշխատակիցների հետ:

Գևորգ Փարսյանը մանրամասն ներկայացրել է կենտրոնի գործունեությունը՝ ընդգծել, որ Կապան-Սենթ Էթիեն քաղաքների միջև ձևավորված բարեկամական արդյունավետ հարաբերությունների հաստատման լավագույն օրինակներից է կենտրոնի ստեղծումը՝ վստահություն հայտնելով, որ այն խթանելու է ֆրանսերեն լեզվի ուսուցումն ու տարածումը Կապանում:

Դեսպանը շնորհակալություն է հայտնել ընդունելության և Կապանում ֆրանկոֆոն կենտրոնի հիմնելու համար՝ բարձր գնահատել Կապան-Սենթ Էթիեն համագործակցությունը:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաև մի շարք հարցեր՝ իրականացվող ծրագրերի ու համագործակցության ընդլայնման նոր ուղղությունների վերաբերյալ:

\*\*\*

Մարտի 24-ին Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտիսյին և պատվիրակության անդամներին:

Ողջունելով դեսպանի այցը Մեղրի՝ համայնքի ղեկավարը կարևորել է հայ-ֆրանսիական բարեկամական հարաբերությունները և շնորհակալություն հայտնել բարեկամ Ֆրանսիային՝ մշտապես Հայաստանի կողքին լինելու, Սյունիքի մարզի նկատմամբ ցուցաբերվող մեծ ուշադրության համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են տնտեսական, մշակութային և համայնքային զարգացման ծրագրեր, երկկողմ համագործակցության նոր հնարավորություններ: Համայնքի ղեկավարի ուղեկցությամբ դեսպանը շրջայց է կատարել Մեղրի համայնքի Կայարան, Արաքսաշեն թաղամասերում, այցելել Անապաստանաց (Սուրբ Հովհաննես) վանք՝ ծանոթանալով տեղաբնիկ պատմամշակութային ժառանգությանը:

Այցի ընթացքում կողմերը քննարկել են նաև կրթական ու մշակութային համագործակցության ընդլայնման հնարավորությունները՝ մասնավորապես ֆրանսիական կազմակերպությունների աջակցությամբ ուսանողների և երիտասարդ մասնագետների համար փոխանակման ծրագրերի ստեղծման գաղափարը:

Համայնքի ղեկավարը, որպես շնորհակալություն և բարեկամության խորհրդանիշ, դեսպանին հանձնել է Մեղրին խորհրդանշող ավանդական նվերներ: Դեսպան Դըկոտիսյին իր հերթին բարձր է գնահատել Մեղրիի հյուրընկալությունը և ընդգծել, որ Ֆրանսիան շարունակելու է աջակցել հայ ժողովրդին, հատկապես՝ Սյունիքի մարզին, տնտեսական զարգացման և հումանիտար ծրագրերի իրականացման շրջանակում:

Դեսպանի այցն արտացոլում է Ֆրանսիայի և Հայաստանի միջև հաստատված ամուր բարեկամական կապերը, որոնք շարունակ



կաբար ամրապնդվում են փոխհաճախող համագործակցության նոր ծրագրերով:

\*\*\*

Տեղ համայնք էր ժամանել Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտիսյին:

Ի պատասխան հակառակորդի կողմից իրականացվող ապատեղեկատվական հեղեղին՝ Խնածախ և Խոզնավար գյուղերում կյանքն ընթանում էր իր բնականոն հունով:

\*\*\*

Գորիսի համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը մարտի 25-ին ընդունել է աշխատանքային այցով մարզ ժամանած՝ Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտիսյինին:

Հանդիպման ընթացքում համայնքի ղեկավարը դեսպանի հետ քննարկել է երկկողմ համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր, որոնք մասնավորապես վերաբերում էին Գորիսում հյուպատոսական գործակալություն բացելու հնարավորությանը, ինչպես նաև Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության գալիք համաժողովին, որը կանցկացվի Գորիսում՝ հունիսի 2-3-ին:

Դեսպանը հատուկ ընդգծել է, որ Գորիսը ֆրանսախոս բաղաբ է, ինչը կարևոր հիմք է հանդիսանում երկկողմ հարաբերությունների

զարգացման համար: Նա կշռել է, որ գալիք համաժողովն ուղղված է երկու երկրների միջև կապերի ամրապնդմանը և համագործակցության նոր ուղիների բացահայտմանը:

Այցի շրջանակներում ԱԳՆ-ի և ՏԿԵՆ-ի գործընկերների հետ դեսպանը շրջայց է կատարել քաղաքում՝ գնահատելու տեխնիկական հնարավորությունները և քննարկելու համաժողովի կազմակերպչական հարցերը:

\*\*\*

Նշվում է, որ Կարմիր Խաչի միջազգային կոմիտեն Արավուտում Ֆրանսիայի աջակցությամբ դիսպանսեր է հիմնել:

«Հայաստանում Ֆրանսիան ներդրում է իր միջոցները՝ հավատարիմ իր համոզմունքներին», – ասված է դեսպանության հաղորդագրությունում:

Հայաստանն ու Ֆրանսիան 2023-ի հոկտեմբերին ռազմական ոլորտում համագործակցության մասին պայմանագրեր են ստորագրել, որոնցով Ֆրանսիան Հայաստանին ռազարներ և հրթիռներ է տրամադրում, խորհրդատվություն՝ բանակի բարեփոխումների հարցում:

Բաթուն էլ մեղադրում է Փարիզին՝ «Հարավային Կովկասում կայունությունը խաթարելու», «հայամետ դիրքորոշման», «Հայաստանին զինելու» համար: //

## Հայաստանում Լիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Մարիկե Մոնրոյ-Վինթերի այցը

Ապրիլի 1-ին Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Լիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան տիկին Մարիկե Մոնրոյ-Վինթերին:

Հանդիպման ընթացքում համայնքի ղեկավարը շնորհակալություն է հայտնել դեսպանին այցի համար՝ ընդգծելով Հայաստանի և Լիդերլանդների միջև համագործակցության կարևորությունն ու դրա զարգացման հեռանկարները: Կողմերը քննարկել են ռազմավարական նշանակության մի շարք հարցեր, մասնավորապես՝ Մեղրիի մշակութային ժառանգության պահպանման, միջազգային համագործակցության խթանման և համատեղ ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Չրոպցի ընթացքում անդրադարձ է կատարվել նաև համայնքի տնտեսական զարգացման հնարավորություններին՝ տեղա-

կան բիզնեսի աջակցմանն ու ներդրումային միջավայրի բարելավմանը: Դեսպան Մոնրոյ-Վինթերը բարձր է գնահատել Մեղրիի հարուստ մշակութային ժառանգությունը, բնապահպանական ներուժը և տարածաշրջանի զարգացման հնարավորությունները՝ ընդգծելով երկկողմ համագործակցության կարևորությունը համայնքային զարգացման գործընթացներում:

Հանդիպման ավարտին կողմերը վերահաստատել են փոխգործակցության ընդլայնման պատրաստակամությունը՝ պայմանավորվելով շարունակել քննարկումները՝ նոր նախաձեռնությունների կյանքի կոչման նպատակով:

\*\*\*

Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանն ապրիլի 1-ին ընդունել է Հայաստանում Լիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Մարիկե Մոնրոյ-Վինթերին: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են մի շարք



կարևոր հարցեր, մասնավորապես՝ գյուղատնտեսության ոլորտին առնչվող խնդիրներ և տնտեսական զարգացմանն ուղղված փորձագիտական աջակցության հնարավորություններ:

Դեսպանի այցը կրել է ճանաչողական

բնույթ, և երկու կողմերն էլ հույս են հայտնել, որ այն կնպաստի համատեղ ծրագրերի մշակմանը և արդյունավետ համագործակցությանը:

//



# ՎԱՐԴԱՆ ԶՅԱՆՅԱՆ. «Պղնձի և մոլիբդենի պահանջարկը կրկնապատկվի և կեռապատկվի, իսկ ադրբեջանական նավթը սպառվում է»

Հանքարդյունաբերությունը երկրի կարևորագույն տնտեսական ոլորտն է և կարևոր դեր է խաղում նաև սոցիալական ոլորտում: Այս մասին մարտի 28-ին «Հանքարդյունաբերության դերն ու նշանակությունը տնտեսության մեջ» թեմայով քննարկման ժամանակ ասել է «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ (ՉՊՄԿ) գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանը:

Լ ա ներկայացրել է կանխատեսումներ այն մասին, որ մինչև 2050 թ. 30 մլն տոննա պղնձի փոխարեն, որն այսօր ամեն տարի արդյունահանվում է աշխարհում, ցուցանիշը կհասնի մինչև 55 մլն տոննայի: «Սա նշանակում է, որ պղնձի պահանջարկը գրեթե կրկնապատկվելու է և շատ ավելի մեծ կլինի, քան առաջարկը, դեֆիցիտը տատանվելու է 1,5 մլն տոննայից մինչև 9,9 մլն տոննա, ինչը կբերի գների բարձրացման: 2024թ. պղնձի արդյունահանումից ստացված եկամուտների տարեկան շրջանառությունը կազմել է 200 մլրդ դոլար, իսկ նավթը՝ 3,1 տրլն դոլար: Սակայն մինչև 2050թ. համաշխարհային շուկայում պղնձի արդյունահանման տարեկան շրջանառությունը կկազմի 1,1 տրլն դոլար, իսկ նավթը՝ մոտավորապես 700 մլրդ դոլար:

գործնականում լճացած է: «Միևնույն ժամանակ, վճարված բոլոր հարկերի 5-11 տոկոսը բաժին է ընկնում մեր արդյունաբերությանը, հանքարդյունաբերական ձեռնարկությունները 2024թ. վճարել են 500 մլն դոլարի հարկեր: Հայաստանում կա միայն մեկ խոշոր հանքարդյունաբերական ձեռնարկություն, որը նկատելի է համաշխարհային շուկայում, մնացածը գործնականում նկատելի չեն: Հայաստանում չկան ՉՊՄԿ-ի նման մասշտաբի և հզորության ձեռնարկություններ: Իրավիճակը փոխելու համար պետք է կամ բացել նոր հանքեր, կամ վերսկսել եղածների շահագործումը, կամ ավելացնել արտադրությունը գործող հանքերում», - ավելացրել է Ջհանյանը:

**«...Հայաստանում արտադրվող պղնձի մասնաբաժինը համաշխարհային շուկայում այնքան էլ մեծ չէ: Ինչ վերաբերում է մոլիբդենի պահանջարկին, ապա դրա պահանջարկն էլ ավելի մեծ կլինի և կաճի 3 անգամ, ինչը նույնպես մեծ ներուժ է ստեղծում մեզ համար»...**

Այդ ընթացքում ադրբեջանական նավթի մասնաբաժինը համաշխարհային շուկայում կգրոյանա, քանի որ այս երկրում նավթի պաշարները սպառվում են: Դժվար է ասել, թե Հայաստանը պղնձի շուկայում ինչ մասնաբաժին կունենա, սակայն անհրաժեշտ է օգտագործել ողջ ներուժը և օգտվել սպառվող փոփոխություններից: Միաժամանակ, Ադրբեջանի տնտեսության մեջ նավթի դերն անհամեմատ ավելի բարձր է, քան պղնձինը Հայաստանի տնտեսության մեջ: Բացի այդ, Հայաստանում արտադրվող պղնձի մասնաբաժինը համաշխարհային շուկայում այնքան էլ մեծ չէ: Ինչ վերաբերում է մոլիբդենի պահանջարկին, ապա դրա պահանջարկն էլ ավելի մեծ կլինի և կաճի 3 անգամ, ինչը նույնպես մեծ ներուժ է ստեղծում մեզ համար», - ավելացրել է Ջհանյանը:

որ հակառակ դեպքում անհնար կլինի արտադրանքի արտահանումը համաշխարհային շուկաներ: Ընդ որում՝ Բաջարանում կամ Ագարակում օդն ավելի մաքուր է, քան Երևանում», - ասել է Ջհանյանը:

Նա տեղեկացրել է, որ կոմբինատի ղեկավարությունն աշխատում է պղնձածուխական գործարանի գործարկման ուղղությամբ՝ նշելով նաև տնտեսական և բնապահպանական էֆեկտների հաշվառման կարևորությունը:

**29.03.2025**

# Այս տարվա նույնքերին Գորիսում կանցկացվի շախմատի միջազգային խոշոր մրցաշար



Մարտի 22-ին Գորիսում հանդիպեցինք ճանաչված շախմատիստ, գրոմայստեր Սմբատ Լպուտյանին: Օգտվելով առիթից՝ նրան հրավիրեցինք հարցազրույցի:

**– Պարոն Լպուտյան, ի՞նչ առաքելություն էք Գորիսում:**

– Շախմատի ակադեմիան և «Մեր ապագան» հիմնադրամը՝ պարոն Կարապետյանի գլխավորությամբ, ամբողջ հանրապետությունում իրականացնում են շախմատային միջոցառումներ: Իհարկե, դա մեծ ոգևորություն է առաջ բերել տարբեր մարզերում, որովհետև այդպիսի մրցաշարեր հազվադեպ են կազմակերպվում: Քանզի մարզում անց է կացվում շախմատի կիսաեզրափակիչ փուլը և լավագույն 12 շախմատիստը հնարավորություն են ունենում խաղալ եզրափակչում:

Այսօր եզրափակիչ փուլն անցկացվում է Գորիսում, և այդ նպատակով էլ այստեղ ենք: Դրա հետ մեկտեղ, իհարկե, կարևորում ենք այն աշխատանքները, որ այժմ իրականացվում է Գորիսում:

Այստեղ առաջին անգամ կանցկացվի շախմատի միջազգային խոշոր մրցաշար, որը տեղի կունենա այս տարվա նույնքերի 11-21-ը:

Այցու նաև առիթ է, որպեսզի ծանոթանամ առկա պայմաններին, հնարավորություններին:

**– Զեզ ճանաչում են հանրապետությունում, ուստի և կուզենայինք իմանալ՝ ներկայումս ինչ՞ով եք զբաղվում:**

– Հանրապետության շախմատի ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալն եմ, Շախմատի ակադեմիայի հիմնադիր-նախագահը և Շախմատի գիտահետազոտական ինստիտուտի տնօրենը:

Հայաստանն ունի Շախմատի գիտահետազոտական ինստիտուտ, որն ամբողջ աշխարհում միակն է: Մեր հետազոտությունները՝ շախմատի ոլորտի հետ կապված, ներկայումս հետաքրքրում են աշխարհի բազմաթիվ երկրների, նրանց ներկայացուցիչները կապի մեջ են, փորձում են մեր հետազոտությունների արդյունքներից հասկանալ՝ որքանով է շախմատը կարևոր կրթական համակարգում:

**– Որքան տեղյակ եք՝ Շախմատի ակադեմիան Սյունիքում ունի մասնաճյուղեր:**

– Այո, Սյունիքում ունենք երեք մասնաճյուղ՝ Կապանում, Մեղրիում, Ագարակում: Նախկինում հանրապետությունում ունեինք Շախմատի ակադեմիայի 53 մասնաճյուղ, ցավում եմ, որ այսօր դրանց թիվը բավականին կրճատվել է և դարձել 27:

**– Զեր գնահատականը Սյունիքում գործող մասնաճյուղերին:**

– Ալեքսը, ով Կապան քաղաքից է, այժմ դարձել է միջազգային վարպետ, ինչը հիմնականում Կապանի մասնաճյուղի աշխատանքի արդյունքն է:

Նույնը կատմ Արարատի մարզից Հայկ Մարտիրոսյանի և Աննա Մարտիրոսյանի մասին...

Այնպես որ՝ մասնաճյուղերը բավականին լավ արդյունքներ են տալիս:

**– Արդյո՞ք նկատում եք աշակերտների հոսքի ավելացում այդ մասնաճյուղերում:**

– Ոչ միայն մասնաճյուղերում, այլ ամբողջ հանրապետությունում նկատվում է շախմատի հանդեպ հետաքրքրություն:

Միևնույն ժամանակ շախմատը դրական արդյունք է տալիս դպրոցներում...

Մենք շախմատն ընդգրկել ենք հանրակրթական դպրոցի ծրագրերում՝ նկատի ունենալով, որ նրա հնարավորությունները շատ օգտակար են մարդու զարգացման և ձևավորման համար:

Մեր ժամանակներում ամենուր, շատ բան է փոխվում կրթական համակարգում: Շախմատի միջոցով կարող ենք օգտակար լինել երեխաների զարգացմանը:

**– Արդյո՞ք տեղեկություններ ունեք Սյունիքի մարզի մասշտաբով՝ շախմատային ոլորտին երեխաների ընդգրկվածության վերաբերյալ:**

– Ստույգ թիվ չեմ կարող ասել:

**– Զեր ունեցած տեղեկություններով՝ քանի՞ երկրներ են հետաքրքրված շախմատը դպրոցական ծրագրերում ընդգրկելու խնդրով:**

– 150 երկիր այսօր շահագրգռված է, որ շախմատ առարկան ընդգրկվի դպրոցական ծրագրերում, որովհետև հասկանում են՝ շախմատը հնարավորություն է տալիս երեխաների մեջ զարգացնել մտածելու, տրամաբանելու, հաշվելու ունակությունները:

**– Մեր հանրապետությունում շախմատն առաջին անգամ ե՞րբ ընդգրկվեց հանրակրթական դպրոցի ծրագրում:**

– Աշխատանքները սկսել էինք 2007 թվականից: Դա տեղի ունեցավ 2011 թվականին...

**– Այդ գործընթացը ինդիկներ ունեցա՞վ, թե՞ ընթացել և ընթանում է առանց դժվարությունների:**

– Մեր Գիտահետազոտական ինստիտուտի միջոցով՝ տարիների ընթացքում տեսել ենք, թե որքան սխալներ ենք թույլ տվել այդ ոլորտում՝ և՛ անհրաժեշտ կուրսերի, և՛ վերապատրաստման խնդիրների առումով: Ու այդ ամենից համապատասխան եզրակացություններ ենք անում:

**– Հանրակրթական դպրոցի ո՞ր դասարաններում են անցնում շախմատ առարկան:**

– Երկրորդ, երրորդ, չորրորդ դասարաններում: Մենք չորս տարի շարունակ հանդիպումներ ենք ունեցել և՛ մանկավարժների, և՛ հոգեբանների, և՛ մեթոդիստների, և՛ բժիշկների հետ՝ որոշակիացնելու, ճշտելու, թե երեխաները ո՞ր տարիքում ինչ որակներ են ունենում մտքի զարգացման առումով, ու այդ ամբողջը հաշվի առնելով որոշեցինք 2-4-րդ



ԹԱՏԵՐԱԿԱՆ ՏՈՒ ԿԱՊԱՆԱԿՈՒ

# Մամուլի ասուլիս. փառատունը կդառնա ամենամյա

Կապանի Ալեքսանդր Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնում մարտի 19-ին տեղի ունեցավ մամուլի ասուլիս՝ նվիրված «Արտավազը-2025» մրցանակաբաշխությանը և Կապանում առաջին անգամ անցկացվող կամերային ներկայացումների փառատունին: Օրվա բանախոսներն էին Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը, Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Տիգրան Աթայանը, փառատունի հովանավոր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի լրատվության և հասարակության հետ կապերի բաժնի պետ Արայիկ Մարգարյանը, Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանը: Միջոցառումներն անցկացվում են Կապանի պետական թատրոնի 90-ամյա հոբելյանի շրջանակում:

Հակոբ Ղազանչյանն իր խոսքում նշեց, որ այն մարզում, որտեղ անցկացվում է թատերական որևէ միջոցառում, լինի դա փառատուն թե մրցանակաբաշխություն, այդտեղ միանգամից աշխուժանում են թատերական կյանքը, մթնոլորտը, ընդգծվում է ուշադրությունը թատրոնի հանդեպ: **«Կապանում մրցանակաբաշխությունը իմ սրտով եր, քանզի կապված եմ այս քաղաքի հետ, այստեղ իմ մանկությունն է անցել, իմ թատերական կարիերան սկսել եմ Կապանի թատրոնում, հետո արժանացա «Կապանի պատվավոր քաղաքացի» կոչման»:** Ես համոզվում եմ հայտնեց, որ տեղական իշխանություններն ամեն ինչ կանեն, որ փառատունը դառնա ամենամյա, իսկ ինքն հնարավորինը կանի, որ փառատունում ընդգրկվեն արտերկրի թատրոնները, և այն դառնա միջազգային: Մասնավորապես, ինչպես նշեց, ինքը երկու անգամ Կապանում կազմակերպել է մոնոներկայացումների միջազգային փառատունը, նաև խոստացավ, որ ինքը Կապան կբերի տարբեր հայտնի թատերախմբեր:

Այնուհետև Հակոբ Ղազանչյանը ներկայացրեց «Արտավազը» մրցանակաբաշխության անցկացման որոշ մանրամասներ, նախապատրաստական աշխատանքները սկսվում է նախորդ տարվա սեպտեմբերից և ավարտվում մարտի 27-ով՝ թատրոնի միջազգային օրը: Ստեղծվում է հինգ հոգանոց փորձագետների խումբ, որն ընտրվում է թատերական գործիչների միության կողմից

և հաստատվում, դիտում է Հայաստանի թատրոնների և Կրաստանի հայկական թատրոնների՝ վերջին մեկ տարում բեմադրած ներկայացումները, որոշում է, թե դրանցից որոնք են անցնում երկրորդ փուլ: Դրանից հետո վարչությունը նորից ընտրում է ժյուրի, որոնք նորից դիտում են այդ ներկայացումները: Իսկ այդ ամենը պահանջում են գործողական ծախսեր, ֆինանսներ մրցանակներ պատրաստելու համար: Մարտի 27-ին տեղի է ունենում ամենամյա «Արտավազը» մրցանակաբաշխությունը, իսկ ապրիլի վերջին ստեղծվում է մյուս տարվա մրցանակաբաշխության փորձագիտական հանձնաժողովը:

Անցյալ տարվանից փոխվել է կարգը. ոչ թե թատրոններն են ներկայացնում իրենց բեմադրությունները, այլ փորձագետները բոլոր առաջնախաղերին մասնակցում են և իրենց կարծիքն են հայտնում: Մի խոսքով «Արտավազը» մրցանակաբաշխությունն ի մի է բերում տարվա լավագույն աշխատանքները՝ 22 անվանակարգում և այդ ամենը մատուցվում է հանրությանը: Երկու տարի է, ինչ «Արտավազը»-ի նոր անվանակարգ է մտցվել՝ «Լավագույն կամերային ներկայացում»:

Թատրոնի տնօրեն Տիգրան Աթայանը նշեց, որ մեկ տարի առաջ Հակոբ Ղազանչյանի հետ սկսեցին քննարկումներ, թե ինչպես նշել Կապանի պետական թատրոնի 90-ամյակը և որոշեցինք «Արտավազը» մրցանակաբաշխության անցկացումը կազմակերպել Կապանում: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն ընդառաջեց իրենց խնդրանքին: Սա մարզային թատրոնները զարգացնելու և մարզում թատերական կյանքն աշխուժացնելու մի միջոց է: **«Կարծում եմ՝ մենք ճիշտ ճանապարհի վրա ենք թատրոնի 90-ամյակը նշելու, հույս ունեմ, որ փառատունը կդառնա ամենամյա, այնուհետև միջազգային»**, – եզրակացրեց խոսքը Տիգրան Աթայանը:

**«Երբ պրոֆեսիոնալները որոշում են, որ լավ միջոցառում է լինելու, մենք ընդամենը մեր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում աջակցում ենք մի ծրագրի, որ հաջողություն կբերի մեր մարզին, այս քաղաքին: Կապանն ունի ամենահին թատրոններից մեկը և արժանի էր ուշադիր վերաբերմունքի, մասնավորապես որ նշվում է թատրոնի 90-ամյակը»**, – այսպես անդրադարձավ իրողության Արայիկ Մարգարյանը: //

## Կամերային ներկայացումների փառատունի բացումը

Մարտի 20-ին Ալեքսանդր Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնում տեղի ունեցավ կամերային ներկայացումների փառատունի բացումը՝ նվիրված Կապանի պետական թատրոնի հիմնադրման 90-ամյակին: Այն հանդիսատեսին կպահի հաճելի լարվածության մեջ և կավարտվի Հայաստանի թատերական գործիչների միության ամենամյա «Արտավազը» մրցանակաբաշխությամբ, որ երկրորդ անգամ է անցկացվում Կապանում:

Թատրոնի դահլիճում հավաքված թատերասերներին և հյուրերին բարեմաղթանքի և օրհնանքի խոսքեր հղեց Կահանավանքի հոգևոր հովիվ տեր Ավետիք քահանա Մարտիրոսյանը:

Բացման խոսքում Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանն օրը հիշարժան համարեց, քանզի ըստ ամենայնի հիմք է դրվում կամերային ներկայացումների ամենամյա փառատունը, նաև հույս հայտնեց, որ այն կդառնա միջազգային: Այս համատեքստում շոյեց կապանցու ինքնասիրությունը՝ ասելով, որ կապանցին արժանի է նման փառատուն ունենալու: Նաև երախտագիտություն հայտնեց Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ղեկավարությանը՝ գործուն աջակցությամբ փառատուն իրականություն դարձնելու համար:

Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանը ողջերթի խոսքում նշեց, որ առանց Կապանի թատրոնի հնարավոր չէ պատկերացնել մարզկենտրոնի մշակութային կյանքը, իսկ փառատունը նոր շունչ է հաղորդում ոչ միայն Սյունիքի, այլև հանրապետության թատերական կյանքին, և համոզվում եմ հայտնեց, որ առաջիկա օրերին քաղաքի մթնոլորտն արվեստասերների համար կլցվի յուրօրինակ գույներով, մասնավորապես որ հանրապետության թատերական կոլեկտիվների ներկայացումներին կապանցի հանդիսատեսը միշտ էլ սպասել է:

Թատրոնի տնօրեն Տիգրան Աթայանը երախտագիտություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր աջակցեցին, օժանդակեցին, որ կամերային ներկայացումների փառատունը կայանա, իսկ ամենամյա «Արտավազը» մրցանակաբաշխությունն այս անգամ անցկացվի Կապանում:

Հանդիսության մասնակիցներին երաժշտական ողջույններ հղեց Կապանի համայնքապետարանի մշակութային կենտրոնի լարային քառյակը (գեղարվեստական ղեկավար՝ Աշոտ Խաչատրյան):

Ցուցադրվեց տեսաֆիլմ՝ Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի 90-ամյա ճանապարհի մասին, այնուհետև եղավ հյուրասիրություն:

Փառատունը մեկնարկեց Կապանի պետական թատրոնի «Կրթոտ սիրահարը» ներկայացմամբ (ըստ Նիլ Սայմոնի), բեմադրությունը՝ Նուրե Խեչումյանի:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

## Կապանի 90-ամյա թատրոնը լուսանկարներում և փաստաթղթերում



Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի 90-ամյա հոբելյանի շրջանակում Կապանի երկրագիտական թանգարանում մարտի 20-ին բացվեց ցուցադրանք: Թանգարանի տնօրեն Ալյոշա Հայրապետյանը ցուցադրանքի բացման խոսքում նշեց, որ թեպետ թատրոնի հիմնադրման տարեթիվը 1935-ի սեպտեմբերն է, բայց մինչ այդ Կապանում, մասնավորապես հանքափորների շրջանում, գործել են շրջիկ թատրոններ: Այդ մասին հիշատակություններ կան, ի մասնավորի Գրիգոր Արծրունու «Մշակ» թերթում: Կապանի թատրոնն իր գործունեությունը սկսեց Շիրվանզադեի «Չար ոգի» պիեսի բեմադրությամբ:

Կապանի պետական թատրոնի տնօրեն Տիգրան Աթայանը երախտագիտություն հայտնեց թանգարանի կոլեկտիվին՝ թատրոնի պատմությունն առանձին ցուցադրանքով ներկայացնելու համար: Նա համոզվում եմ հայտնեց, որ ցուցադրանքը հիմք կդառնա թատրոնի 90-ամյա պատմությանը նվիրված գիրք հրատարակելու համար: ➤

## Կամերային ներկայացումների փառատոնի բրոնհիկոն

Նախադեպը չունեցող փառատոնը, նվիրված Կապանի պետթատրոնի հիմնադրման 90-ամյակին, մեկնարկեց մարտի 20-ին Կապանի Ա. Շիրվանզադեի անվան թատրոնի «Կրթոտ սիրահարը» (ըստ՝ Նիլ Սայմոնի) առաջնախաղով (բեմադրությունը՝ Նունե Խեչումյանի): Գաղափարը օրը բեմահարթակում Միեր Մկրտչյանի արտիստական թատրոնն էր՝ «Եվ եղավ սերը» (թատրոն պոեզիա) բեմադրությամբ (բեմադրությունը՝ Գայանե Անդրեասյանի):

Մարտի 22-ին Գյումրու Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնը հանդիսատեսի դատին հանձնեց «Խելահեղ SEANCE» ներկայացումը (բեմադրությունը՝ Ռաֆայել Իսրայելյանի):

Մարտի 23-ին բեմադրվեց «Արմինո» միջազգային փառատոնի «Սասունցի Դավիթ» ներկայացումը (բեմադրությունը՝ ԶՅ վաստակավոր արտիստ Նարինե Գրիգորյանի):

Մարտի 24-ին հանդիսատեսին հանդիպում էր սպասվում մեծ շանսոնիե Շարլ Ազնավուրի հետ: Բեմահարթակում երևանի կամերային թատրոնն էր՝ «Ազնավուր» (ճանապարհորդություն ժամանակի և երաժշտության միջով) բեմադրությամբ, որն իրականացրել էր Դավիթ Աբրահամյանը: Հանդիսատեսը ևս մի անգամ հաղորդակցվեց Շարլի կյանքի դրվագների հետ՝ ընդամենը վայելելով Նրա երբևէ չհնացող երգերի պատճառած բերկրանքը:

Մարտի 25-ին Կապանի Ա. Շիրվանզադեի անվան պետթատրոնի բեմահարթակում Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնն էր՝ «Կնոջս անունը Մորիս է» բեմադրությամբ, որն իրականացրել է Հակոբ Ղազանչյանը:

Փառատոնը եզրափակվեց Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի «Հաղթանակի գեներալը» վավերագրական ներկայացմամբ, որը վերակենդանացրեց Արցախյան շարժման և մեզ պարտադրված պատերազմի իրադարձությունները: Բեմադրությունն իրականացրել էր Նարինե Գրիգորյանը:

Մարտի 26-ին Կապանի պետթատրոնի 90-ամյակի շրջանակում Կապանի մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ «Արտավազ» ամենամյա մրցանակաբաշխությունը, ընդ որում՝ երկրորդ անգամ Կապանում, առաջինը կայացել էր 2006 թվականին՝ Կապանի թատրոնի հիմնադրման 70-ամյակի առիթով:

**ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

Օրվա խորհրդին պատշաճորդ խոսք սասց Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանը: Թատրոնի գեղարվեստական ղեկավար Անդրանիկ Խաչատրյանն առաջարկություն արեց դարձնելու պատմության առարկայի մի դասաժամ տրամադրել, որ աշակերտները ծանոթանան իրենց բաղաձի թատրոնի պատմությանը:

Պաշտոնական արարողությունից հետո թանգարանի տնօրենը ներկաներին ծանոթացրեց ցուցադրանքին, որում ըստ ժամանակահատվածների ներկայացված էր թատրոնի անցած ուղին՝ լուսանկարներով, փաստաթղթերով, լրագրային հրատարակումներով:

Առանձին վահանակ էր նվիրված թատրոնի երջանակահիշատակ տնօրեն Կամր Արզումանյանին և երջանակահիշատակ գեղարվեստական ղեկավար Վազգեն Սարգսյանին: Ամենավերջին վահանակը ներկայացնում էր թատրոնի ներկան, թատրոնի ժամանակակից սերնդին:

**ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

## Թատրոնի միջազգային օրը հայտնի դարձան «Արտավազ»-ի մրցանակակիրները

Թատրոնի միջազգային օրը՝ մարտի 27-ին, Կապանի Մշակույթի կենտրոնում անցկացվեց «Արտավազ» ամենամյա մրցանակաբաշխությունը: 24-րդ «Արտավազ»-ը կազմակերպվեց Կապանում՝ բաղաձի թատրոնի հիմնադրման 90-ամյակի առիթով:

Մեծ «Արտավազ»-ը տրվեց Տիգրան Աթայանին՝ Կապանի Ա. Շիրվանզադեի անվան թատրոնին ստեղծագործական Նոր շունչ հաղորդելու և Կապանի կամերային ներկայացումների փառատոնը հիմնադրելու համար:

**Հատուկ Արտավազ»-ի** արժանացան Արմեն Քուչկյանը՝ «Սասունցի Դավիթ» մոնոներկայացման համար, որը բեմադրվել է «Արմինո» միջազգային փառատոնի շրջանակում, Թբիլիսիի Պ. Ադամյանի

Նակարգում մրցանակը տրվեց Աշոտ Թադևոսյանին՝ Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոն, «Փող: Կիրք: Իշխանություն»:

**Լավագույն զգեստների նկարիչ** համարվեց Քնքուշ Մախասյանը՝ «Ուրվականների սոնատը», «Սանտա Սիթի» ներկայացումների համար, Մաշխատի թատրոն, «Շուն» թատրոն:

**Լավագույն լուսային նկարիչ** ճանաչվեց Արա Գասպարյանը՝ «Սովորական հրաշք», «Սասունցի Դավիթ» Միեր Մկրտչյան արտիստական թատրոն, «Արմինո» միջազգային փառատոն:

**Լավագույն երաժշտության հեղինակ** դարձավ Արմեն Շահինյանը՝ «Բարկանուն էս», «Մարդը ափի մեջ», Ս. Սարգսյանի անվան համազգային թատրոն: **Լավագույն թատերախոսություն**



անվ. հայկական դրամատիկական թատրոնի «Խանում» ներկայացումը, որի բեմադրիչն Արմեն Բայանդուրյանն է, Արինա Արարատյանը՝ «Խավարի առաքյալները» ներկայացման համար, որը բեմադրվել է Գյումրու Վ. Աճեմյանի անվան թատրոնում, Ներսես Մարկոսյանը՝ «Ազնավուր. ճանապարհորդություն ժամանակի և երաժշտության միջով» ներկայացման համար, որը բեմադրվել է Երևանի Կամերային թատրոնում:

**Թատերարվեստին արժանապատիվ ծառայության համար** մրցանակներ տրվեցին Կապանի Ա. Շիրվանզադեի անվ. թատրոնի դերասան Արտավազ Գրիգորյանին և դերասանուհի Նատալյա Բաղդասարյանին:

**Լավագույն տղամարդ դերակատար** անվանակարգում մրցանակի արժանացավ Սոս Սարգսյանի անվ. համազգային թատրոնի դերասան Վարչամ Գևորգյանը՝ «...Իսկ դրսում ծյուն է գալիս» (Հիկո) ներկայացման համար:

**Լավագույն կին դերակատար** համարվեց Կ. Ստանիսլավսկու անվ. ռուսական դրամ. թատրոնի դերասանուհի Լիլիա Մուկուչյանը՝ «Սպանդի աստվածը» (Վերոնիկա Վալյուն) ներկայացման համար:

**Երկրորդ պլանի լավագույն տղամարդ դերակատար** ճանաչվեց Գ.Սուևուկյանի անվ.ազգային ակադեմիական թատրոնի դերասան Նարեկ Հայկազյանը՝ «Ուղեգրություն» (ժան) ներկայացման համար:

**Երկրորդ պլանի լավագույն կին դերակատար** համարվեց Կ. Ստանիսլավսկու անվ. ռուսական դրամատիկական. թատրոնի դերասանուհի Թեմիլե Խաչատրյանը՝ «Փող: Կիրք: Իշխանություն» (Ելիզավետա Ալեքսանդրովնա) ներկայացման համար:

**Լավագույն սցենարաֆիա** անվա-

անվանակարգում հաղթեց Անի Հարությունյանը՝ «Պարույր Սևակի «Մարդը ափի մեջ» պոետիկ տեքստի վերամարմնավորումը»:

**Լավագույն երիտասարդ դերասան** համարվեց Արմեն Մաթևոսյանը՝ «Ելքերնո-Գորդոնի Էֆեկտը» (Հարի) մոնոներկայացում, «Արմինո» միջազգային փառատոն:

**Լավագույն երիտասարդ դերասանուհի** ճանաչվեց Միլենա Ղազարյանը՝ «Լակոտը» (Թագուհի), Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն:

**Լավագույն երիտասարդ բեմադրիչ** ճանաչվեց Ռուզան Խաչատրյանը՝ «Արևի մարդիկ», Զ.Պարոնյանի անվ. երաժշտական կոմեդիայի թատրոն:

**Լավագույն մանկական ներկայացում** համարվեց Նարինե Գրիգորյանի «Բարկանուն էս» բեմադրությունը, Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն:

**Լավագույն երիտասարդական ներկայացում** համարվեց Նարինե Գրիգորյանի «Մարդը ափի մեջ» բեմադրությունը՝ Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն:

**Լավագույն պլաստիկական ներկայացում** համարվեց «Ուրվականների սոնատը», բեմ.՝ Ինա Հախնազարյան, Մաշխատի թատրոն:

**Լավագույն կամերային ներկայացում** ճանաչվեց «Է»-ն, բեմ.՝ Չառա Անտոնյան, Բաբելոն թատրոն:

**Լավագույն ռեժիսուրա** անվանակարգում հաղթեց Սուրեն Շահվերդյանը՝ «Փող: Կիրք: Իշխանություն», Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոն:

**Լավագույն ներկայացում** համարվեց «Լակոտը», բեմ.՝ Անդրանիկ Միքայելյան, Նարինե Գրիգորյան, Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն:

Հայաստանի թատերական գործիչների

միության նախագահ **Հակոբ Ղազանչյանը** խոստովանեց՝ միշտ է ցանկացել էրևանից բացի նաև մարզերում անցկացնել սպասված թատերական իրադարձությունը: Ուրախ է, որ հաջողվել է իրագործել գաղափարը:

**«Տարիներ առաջ մրցանակաբաշխությունն այլ ձևաչափով էր իրականացվում, անվանակարգերը քիչ էին, այսօր շատ երիտասարդ դերասաններ, մասնավոր թատրոններ չկային, իսկ հիմա ծնվում են իրար հետևից, ինչը լավ է»**,- շեշտեց նա:

Ղազանչյանի խոսքով՝ 24-րդ «Արտավազ»-ի մրցանակակիրներին ընտրելիս ժյուրին փորձել է հնարավորինս արդար լինել, սակայն սուբյեկտիվ տարր կա, բանի որ մարդիկ են որոշում կայացնում, և ոչ ոքի կարծիքը բացարձակ ճշմարտություն լինել չի կարող:

**«Այս տարի առաջին անգամ այլ կերպ իրականացվեց «Արտավազ»-ը: Առաջ թատրոններն էին մասնակցության հայտ տարբերակիչ: Սկզբում վարչությունը ստեղծեց հինգ հոգուց բաղկացած փորձագետների խումբ, որոնք դիտեցին ներկայացումները, ինչից հետո որոշեցին, թե որ աշխատանքներն են անցնում մրցակցային փուլ: Ավելի ուշ վարչությունը ձևավորեց ժյուրիի երկրորդ կազմը, որի անդամներն ամփոփեցին փորձագետների ընտրության արդյունքներն ու ընտրեցին լավագույններին: Մինչ մրցանակաբաշխությունը՝ ժյուրիի անդամները չգիտեին, թե ով է հաղթել, բանի որ փակ քվեարկություն է ընթացել: Միայն ես և համակարգող քարտուղարն ենք իմանում անունները»**,- պատմեց միության նախագահը:

Խոսելով միության իրականացրած այլ կարևոր նախաձեռնություններից՝ Ղազանչյանը հիշատակեց Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան թատրոնի գիրք-այլընձ վերահրատարակումը: Երբ Ստեփանակերտի թատրոնի ստեղծագործական կազմը ստիպված է եղել դուրս գալ ԼՂ-ից, տպաբանակը մնացել է այնտեղ: Մի քանի օրինակ են կարողացել դուրս բերել:

Կապանի թատրոնի տնօրեն **Տիգրան Աթայանի** համոզմամբ՝ իրենց թատրոնը կարևոր օղակ է բաղաձի: Նրանք փորձում են արվեստի միջոցով հանրության ուշադրությունը սևեռել Կապանի վրա, որն արժանի է դրան և ունի մշակութային բարի ավանդույթներ:

**«Ըստ իմ՝ մրցանակաբաշխությունը մեր բաղաձի բերելը լավ գաղափար էր: Այստեղ մարդիկ սիրով են հաճախում թատրոն: Կապանը նաև սիմֆոնիկ նվագախումբ, ժողովրդական գործիքների նվագախումբ ունի: Առաջընթաց, միանշանակ, կա»**,- ասաց նա:

90-րդ թատերաշրջանը կմեկնարկի սեպտեմբերին, բանի որ թատրոնը կրում է Շիրվանզադեի անունը և բացվելու է հեղինակի «Չար ոգի» ստեղծագործության համանուն ներկայացմամբ, նախատեսում ենք Նոր թատերաշրջանում բեմադրել գրողի գործերից մեկը: Կլինեն նաև հոբելյանին նվիրված մի շարք միջոցառումներ: Նա հույս ունի, որ կունենան աջակիցներ:

«Արտավազ» մրցանակաբաշխությանը նախորդող օրերին՝ մարտի 20-26-ը, Կապանի թատրոնում անցկացվել է Կամերային ներկայացումների փառատոն, որի ընթացքում հանդես են եկել հանրապետության լավագույն թատերական կոլեկտիվները: Թատերական գործիչները կասկած չունեն, որ թե՛ մրցանակաբաշխությունը, թե՛ փառատոնը կխթանեն տեղի թատերական կյանքը՝ հանդիսատեսին էլ ավելի կապելով թատրոնին:

ՀԹԳՄ «Արտավազ» ամենամյա թատերական մրցանակաբաշխությունն ի մի է բերում նախորդ տարվա կատարված աշխատանքները: Մրցանակաբաշխությունը 1996 թվականին հիմնադրել է ՀՀ ժողովրդական արտիստ Երվանդ Ղազանչյանը: Սկզբում մրցանակ է տրվել միայն «Թատերարվեստին արժանապատիվ ծառայության համար» անվանակարգում, իսկ 1999 թվականից սկսած տարբերտարի անվանակարգերի թիվն ավելացել է:

**ARMENPRESS**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՍՏՈՒՍԱՆԻ ԴԱՏԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՆՈՒՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՆՈՒՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՆՈՒՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

# ԵՎՁԵՆԻ ԼԱՆՍԵՐԵՆ, ՈՒՄ ՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ԵՏՅՈՒՆԵՐԸ` ՉԱՆՁԵՂՈՒՐ-ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ, ՉԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԻԿԱԳՄՈՒՆՔ ԿԱՏՈՃԱՌԵԼ

Ռ ուս խորհրդային Նկարիչ, ՌԽՍՖՅ ժողովրդական Նկարիչ Եվզենի Լանսերեն ծնվել է 1875 թ. օգոստոսի 23-ին (սեպտեմբերի 4-ին), Կյանքից հեռացել է 1946 թ. սեպտեմբերի 13-ին:

Սովորել է Պետերբուրգի գեղարվեստը խրախուսող ընկերության դպրոցում (1892-1895), Փարիզի Կուլառուսի և Ժյուլիանի ակադեմիաներում (1895-1898): Եղել է «Միր իսկուստվա» խմբավորման անդամ:

20-րդ դարի սկզբին ստեղծել է պատմանկարչական ժանրի աշխատանքներ («Պետրոս 1-ի Նավերը», 1911), քաղաքական գծանկարներ (1905-1907 թվականների հեղափոխական ամսագրերի համար), Նկարագարդել գրքեր («Չանգեզուրի տարագրվ կինը», Լ. Տոլստոյի «Չաջի-Մուրադ», 1912-1916 թվականներ, «Կազակներ», 1917), հաստոցային նկարներ («Չանգեզուր», 1926, «Դադստանի կարմիր պարտիզանները», 1931), մոնումենտալ-գեղանկարչական գործեր (Մոսկվայի Կազանյան կայարանի, 1945-1946 թվականներ, «Մոսկվա» հյուրանոցի, 1937, դահլիճների որմանկարները), կատարել թատերական ձևավորումներ:

1926-ին Եվզենի Լանսերեն այցելել է Սյունիք-Չանգեզուր՝ երկրամասի մոտիվներով գեղանկար ստեղծելու նպատակով:

1926 թվականին երևանում բացվել է Լանսերեի Չանգեզուրում կատարած նկարների ու ետյուներին ցուցահանդեսը, որոնց զգալի մասը պահպանվում է Հայաստանի պետական պատկերասրահում: Արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի (1943):

Եվզենի Լանսերեի Սյունիք-Չանգեզուր այցի մասին է Սերո Խանգադյանի հոդվածը՝ «Եվզենի Լանսերե» վերտառությամբ:

Հոդվածն ընդգրկված է «Ինչպես հիշում եմ» վերնագրով հուշերի գրքում:

Ներկայացնում ենք Սերո Խանգադյանի հոդվածը:  
\* \* \*

1926 թվականին եր. որբան հիշում եմ՝ ամռանը: Համենայն դեպս թուրքը հասել էր մեր Շռանի այգում: Ես արդեն տասնմեկ տարեկան էի ու մենք ապրում էինք քաղաքի մեր խրճիթում, որ հայրս էր մի երկու տարի առաջ կառուցել: Մի առավոտ մայրս ինձ ուղարկեց մեր Շռանի այգին:



— Լորին կյրես, իրիկունս էլ թուփ կբերես:

Մեր այգու հարևանն էր մեր Կուճի ամին, իր կնոջ՝ Կուճի զիգայի հետ: Նրանք իրենց այգում նոր տուն էին շինել և ապրում էին այնտեղ: Մեր Կուճի ամին տարեց մարդ էր, երևի հիսունը լրացած: Մեր Գորիսը երկու մաս ուներ՝ Շենը, որ հին, շատ հին Գորիս գյուղն է և Կալին պաշտ, որ քաղաքն է: Գյուղում ու քաղաքում մեր Կուճի ամուն Տոռզին Մաթավեսին Հարաբեղ էին ասում, իսկ մենք Կուճի ամի, քանի որ նա իմ մոր տատի՝ Լանսերենում զիգայի ամուսնու եղբոր տղան էր: Փոքր-ինչ շիկավուն, միջառասակ մարդ էր Կուճի ամին: Կատակասեր էր ու բարի: Նրա կնոջ՝ մեր Կուճի զիգայի անունը Շուշանն էր: Լիքը-լիքը կին էր, տեղական «հայավարի» տարագրվ և, ինչպես բոլորն էին ասում, շատ գեղեցիկ: Նրա արիսալուրդ կարմիր-կապույտ էր, հալավը վարդագույն, գլխին ճերմակ շղարշ: «Հայավարի» կոչված տարագր շատ սովորական էր մեր կողմերում: Եթե տուն օր էր, ապա Կուճի զիգան շքեղ էր հագնվում, գլխին պալտի՝ արծաթե ճակատանոցով, թևերին արծաթե բոժոժածև սուրմաներ: Պալտու ճակատին խոշոր ոսկե դրամ էր հագցրած: Արծաթե էին նրա քիթկալի կեռերը, կուկալի հաստ շղթան, կրծքի կոճակները: Աննման էր, մանավանդ նրա արծաթե լայն գոտին՝ խոշոր, կումբածև ճարմանդի վրա զանազան քանդակներ:

Այդ օրը Կուճի զիգունց այգում շատ մարդ էր հավաքվել: Շատերը Կուճի զիգունց հարևաններն էին՝ մեծ, փոքր: Քաղաքից եկել էր նաև փոստատար հայրս: Արտակարգ ուրախ էր հայրս: Նրա գուլպաները նոր էին, տրեխները՝ մաքուր: Հայրս ռուսերեն խոսում էր վարժ: Հայրս հետը մի ռուս մարդ էր բերել Կուճի ամունց այգին: Ռուսը թխավուն երեսով էր, երևի հիսուն տարեկան կամ մի փոքր ավելի: Նա սև կոստյում ուներ, սև փողկապ: Գլխին շյապա էր: Երբ շյապան հանում էր մեկն ու մեկի բարեն առնելու, երևում էր նրա փայլուն ճակատը, որ շատ էր նման հորս գլխին: Հայրս, պարզ է, այդ մարդու հետ խոսում էր ռուսերեն: Ես էլ հատուկեմտ բաներ հասկանում էի: (Հայրս աշխատում էր ինձ ռուսերեն սովորեցնել): Ռուս հյուրի հետ խոսելիս հայրս նրան անվանում էր Եվզենի Եվզենիչ:

Թուփ էին ուտում այգում, ծառերի տակ, կարճ խուզած կանաչի վրայից: Երբ Եվզենի Եվզենիչը կռանում էր թուփ ուտելու, նրա փողկապը կախ էր ընկնում, հասնում գետնին: Մենք՝ փոքրերս թաքուն ծիծաղում էինք:  
\* \* \*

Եվզենի Լանսերե, Քարայրի բնակիչներ. Չանգեզուր (1926), թուրք, տեսակերպ



Թթենու տակ սեղան գցեցին՝ հյուրին հաց տալու: Այգի մտած մարդիկ հարգանքով բարևում էին հյուրին, հորս հարցնում.

- Եղ ռուսը ո՞վ ա, Լիկոլայ:
- Ես մարդը խուրդմիկ-պատկերահասն է,– հայարտ ասում էր հայրս: – Սա Լանսերե Եվզենի Եվզենիչն է: Եկել է Մոսկվայից:
- Բա՛,– զարմանում էին մերոնք: – Մոսկվայի՞ց:
- Հա՛:
- Ինչի՞ ա եկել:
- Եկել ա, որ մեր Շուշանին նկարի:

Լանսերեն սև, փոքրիկ բեղեր ուներ: Ինչպես ինձ թվաց, նա շատ բարձրահասակ էր: Նա գրուցում էր հորս հետ, իսկ հայրս նրա ասածները թարգմանում էր հայերեն՝ հավաքվածների համար: Ռուսերեն քիչ-միջ խոսում էր նաև մեր Կուճի ամին: Մի քանի տարի աշխատել էր Ռուսաստանում: «Սարու ուռուսի արևը կծեմ,– հաճախ ասում էր նա: – Օրը օխտը մարդի գործ ա անում»:

Հենց որ «խուրդմիկը» բերանը բաց էր անում, մերոնք դառնում էին դեպի հայրս:

- Եղ ի՞նչ ասաց, Լիկոլայ:
- Եվզենի Եվզենիչն ասում ա ինքը շատ ա հավանում մեր Գորիսը:
- Այ շմտ ապրի...
- Ասում ա, թե ես մեր կնանկը շորերը Հիսուս Քրիստոսի ժամանակից էլ հին են, շատ լավն են ու շատ գեղեցիկ:

Լանսերեն հետը եռտանի փայտյա հարմարակն էր բերել և մի արկղ, որի մեջ ներկեր կային: Նա այդ հարմարակնի վրա սպիտակ կտավ բաշեց և սկսեց գույներն իրար խառնելով՝ պատրաստվել նկարելու: Մենք՝ փոքրերս շուռնչեքս պահած հետևում էինք նրա յուրաքանչյուր շարժմանը: Ես իմ կյանքում նկարիչ չէի տեսել:

Կանչեցին մեր Կուճի զիգուն: Սա եկավ զուգված-զարդարված: Լանսերեն ինչ-որ բան ասաց հորս: Հայրս դիմեց մեր Կուճի զիգային.

– Շուշան, եղ բուլբուլ-բանդ հանի, կապաղ կեց: Են շորերը կեց, որով գործ ես անում բաղում, արտում, տանը:

- Կուճի զիգան բաշվեց.
- Կու՛, բա համու՞թ չի:
- ՉԷ՛, տան շորերը կեց:

Կուճի զիգան մտավ տուն ու քիչ հետո եկավ տնային, աշխատանքային գգեստով, որ թեև նույնպես «հայավարի» էր, սակայն համեստ էր: Լանսերեն նրան խնդրեց գուլպա գործել:

Կուճի զիգան կանգնել ծառի տակ: Լանսերեն թևերը հետ ծալեց, ուշադիր-զննող նայեց Կուճի զիգուն և ձեռքը թափով շարժելով՝ սկսեց նկարել...

Կուճի զիգայի կապան կապույտ էր, գոզնոցը՝ ևս, կապայի թևերը ծալած էին, որոնց տակից երևում էին կարմիր հալավի ծայրերը: Գեղեցիկ էր Կուճի զիգան, մանավանդ ճակատանոցով, գլխի սև շալով, որի տակից երևում էր նաև սպիտակ չարդաթը (շղարշը): Շատ գեղեցիկ էր նրա արծաթե գոտին՝ կլոր կումբով ու հաստ ճարմանդով: Լանսերեն հորս միջոցով խնդրեց հավաքվածներին, որ հեռանան, գնան իրենց տները: Մեկը զարմացավ.

- Ինչի՞, մենք մարդ օտու՞ղ ենք: Թող թամաշա անենք:
- Լավ չի, – ասաց հայրս: – Չնայե՞ք ձեր բանին, այ մարդիկ: Որ կշտին մարդ ա լինում, խուրդմիկը կարում չի նկարի: Ձեռքերը կուղվարում են:

Լանսերեն շատ խնդրեց, որ հավաքվածները հեռանան:

Կուճի զիգան կանգնել էր խոնարհ, հանդարտ ու գուլպան էր գործում սև թելից: Նրա գեղեցիկ, կարմիր դեմքը շողում էր հպարտ ամոթաճանաչողությամբ: Պակաս հպարտ չէր նաև նրա ամուսին Կուճի ամին: Նա նույնիսկ բարկացավ հավաքվածների վրա:

– Դե ռադ իլեթ, այ մարդիկ: Արջ են պար ածու՞մ, որ հավաքվել եք գլխներին: Չնայե՞ք, թե չե՞ հիմի շուռը բաց կթողնեմ, հա՛...

Հավաքվածները չկամ ու դժգոհ հեռացան: Ես էլ գնացի դեպի մեր այգին: Բայց Կուճի ամին ինձ կանչեց.

- Այ տղա, դու եկ մա խուրդմիկի կիշտին: Եկ... Նա ու հայրս մտան տուն: Ես թռա նրանց մոտ:
- Ընդեղ կաղնի,– ասաց Կուճի ամին: –




### Արտակ Աղաբեկյանը՝ ազատ ըմբռնմարտի պատանիների 33 կրկնակի չեմպիոն

2025 թ. մարտի 18-ից 21-ը Երևանի «Դինամո» մարզադահլիճում կայացավ Ազատ ըմբռնմարտի պատանիների 2025 թ. 33 առաջնությունը: Եզրափակիչ գոտեմարտում բացարձակ առավելությամբ հաղթեց Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոցի սան Արտակ Աղաբեկյանը և դարձավ 33 կրկնակի չեմպիոն՝ վաստակելով Եվրոպայի և

աշխարհի առաջնություններին մասնակցելու իրավունք: Շնորհավորում ենք Արտակին ու մեր թիմին՝ փառահեղ հաղթանակի համար՝ հետագա հաղթանակներ ու դափնիներ ցանկանալով Եվրոպայի և աշխարհի առաջնություններում: **ԳՈՐԻՍԻ ՏԱՐԱԾԵԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ**

### Գորիսեցի Ալբերտ Գրիգորյանը՝ միջազգային Mix Fight-ի 63 կգ քաշային կարգի հաղթող

Ալբերտ Գրիգորյանը միջազգային Mix Fight-ի մրցաշարում հասել է Լշանակալի հաջողության՝ գրավելով առաջին տեղն իր տարիքային և քաշային կարգում: Սա կարևոր ձեռքբերում է երիտասարդ մարզիկի համար, ով իր տաղանդով և աշխատասիրությամբ կարողացել է հաղթահարել միջազգային մակարդակի մրցակիցներին: Վճռական մրցամարտում Ալբերտը հաղթել է իրանցի մրցակցին՝ 17-ամյա պատանիների 63 կգ քաշային կարգում: Մրցաշարին մասնակցել են բարձր որակավորում ունեցող մարզիկներ Յայաստանից, Իրանից և Վրաստանից: **ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**



### Աղբեջանն օրեր շարունակ կրակում է Սյունիքի ուղղությամբ, իսկ այստեղ փարիսեցիների հանդես է

Սկիզբը՝ էջ 1

Ամենաուշագրավը՝ աղբեջանցիների սանձարձակություններին մենք պատասխան չենք տալիս, իսկ թշնամու ահաբեկչական քայլերը կարող են և վտանգավոր հետևանքներ ունենալ, ինչպես ունեցել են Սյունիքում 2020 թվականի դեկտեմբերի 18-ից սկսած:

Եվ, այդուհանդերձ, փառք ու պատիվ մեր սահմանապահ բնակավայրերի մարդկանց, որ խուճապի չեն մատնվում, թեև առկա է մտահոգություն և անորոշություն:

Այդ մտահոգությունների և անորոշության պատճառը, որքան էլ տարօրինակ է, ոչ թե Աղբեջանի ահաբեկչական գործողություններն են, այլ սյունիքյան տարատեսակ իշխանավորների անտարբեր վերաբերմունքն ու կասկածելի պահվածքը տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ:

Սյունիքի մարզպետարանի մասին չենք խոսելու, ինչպես որ չենք խոսել վերջին երեք տարում. այդ կառույցը բացակա է սյունիքյան իրականությունից: Իսկ եթե ժամանակ առ ժամանակ գոյության լշաններ է ցույց տալիս, ապա բացառապես մի նպատակադրությամբ՝ 37 թվականի հանգույն բացահայտել բոլոր նրանց, ովքեր երկրամասում սեփական կարծիք ունեն, ովքեր շատ թե քիչ արժանապատվություն ունեն, ովքեր երկրամասի նվիրյալ են և Լրանց մասին «տեղեկություններ» հորինել ու փոխանցել Երևանին՝ Լրանցից վրեժ լուծելու աղաչանքով:

Աժ սյունեցի (ՔՊ-ական) պատգամավորների մասին նույնպես չենք խոսելու: Նրանք էլ սեփական կարծիք կամ դիրքորոշում հայտնելու դեպքում (եթե, իհարկե, ունեն նման կարծիք կամ դիրքորոշում Սյունիքում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ) կգրկվեն իրենց շնորհված արտոնություններից, իրենց անձին նվիրված մարդկանց հովանավորելու հնարավորությունից, պարզավաճարներից... Իսկ անձնական շահերի համապատասխան վրա Սյունիքին սպառնացող վտանգները կարևորություն չեն ներկայացնում:

Ամենակարևորը, Լրանցից ոմանք այնքան են վարժվել-հմտացել բանսարկության ոլորտում, որ այդ առումով դասագրքային օրինակ կարող են լինել...

Եվ այս մթնոլորտում վայն նրան, ով

կհամարձակվի որևէ լրատվամիջոցով բարձրաձայնել՝ այս գիշեր կրակոցներ են եղել Խոզավարի կամ Խնածախի ուղղությամբ, եթե նույնիսկ տասնյակ փաստեր կան:

Ընդ որում՝ նման պահվածք դրսևորողները չեն ելնում հայոց պետության կամ պետականության շահերից, Սյունիքի շահերից, ընդհակառակը՝ նրանք ելնում են բացառապես իրենց անձնական շահերից և վարկաբեկում հայոց պետությունն ու պետականությունը:

Այսպես՝ իրականության մասին ճշմարիտ խոսք հնչեցնելը ոմանք գնահատում են իբրև ոտնձգություն իրենց պաշտոնին, իրենց անձնական բարեկեցությանը. իրենք հո Սյունիք չե՞ն բերվել երկրամասի դարդ ու ցավին բայասան դեղու համար:

Ոմանք էլ ճշմարտության մասին բարձրաձայնելը համարում են ոտնձգություն իրենց բիզնեսի ու թալանի բարեհաջող ընթացքին:

Ուրեմն և՛ բոլոր «հայրենասերները» պետք է լռեն ու ձեն չհանեն, լավագույն դեպքում ասեն՝ «Այո, թուրքերը կրակում են գյուղի ուղղությամբ, բայց գյուղի վրա չեն կրակում»:

Ու եթե մարզային միակ լրատվամիջոցը փորձում է երբեմն-երբեմն մեկ-երկու նախադասությամբ (թեկուզ և կիսատ-պռատ) բարձրաձայնել սյունիքյան իրականության մասին, ապա րոպեներ հետո սպառնալիքների տարափ է սկսում՝ «Մտածեք հետևանքների մասին՝ և՛ թերթի, և՛ ընտանիքների առումով»:

Այդ ամենը թույլ է տալիս վերստին փաստել՝ կա իրական Սյունիք իր հոգսերով ու մտահոգություններով և կա ասպատակների կամ անցորդների մի փաղանգ, որ հանուն անձնական շահի չի տեսնում, չի լսում սահմանին հնչող կրակոցները, չի հիշում, որ Սյունիքի հարյուրավոր հեկտար հողատարածքներ բռնազավթված են թշնամու կողմից, չի կարևորում, որ Մեղրիով թուրքն «անխոչընդոտ» և «պարզեցված եղանակով» ճանապարհ պետք է ունենա...

Բայց այդ արարածների ամենամեծ դժբախտությունն այն է, որ չեն հասկանում ամեն ինչ վերջ է ունենում, որ իրերը (օրերից մի օր) կարող են և իրենց անտևով կոչվել, որ իրենց սպառնալիքներն ու խարդավաքները կարող են և համարժեք պատասխան ստանալ...

Մարդ ա, ջուր-բան կոզի, կտաս: Ես նստեցի «խուղոմնիկից» մի փոքր հեռու, հենց կանաչ խոտերին ու սկսեցի նայել նրա ձեռքի շարժումներին: Նա վրձինը թափով բաշում էր կտավին, զծեր անում, ապա մի պահ սևեռում նայում էր մեր Կուճի զիգային: Սկսեց խոսել ինձ հետ՝ առանց գործից կտրվելու: Ես միտքս լարեցի, որ հասկանամ նրա ասածը: Հասկանում էի: Նա ասաց, որ ինքը եղել է Փարիզում, Հռոմում ու էլի շատ տեղեր: Դրանք ինձ համար հեռավոր երազանքներ էին: Ես ընդամենը ստանում էի տարեկան էի և Լոր էի լսել հեռավոր աշխարհների այդ անունները:

Երեք օր «խուղոմնիկը» եկավ Շռանի ձորը: Երեք օր նա նկարեց մեր Կուճի զիգուն: Երբեմն նա ինձ ուղարկում էր ջուր բերելու: Կուճի զիգան ասում էր.

– Թան պեր, այ բալա: Հրեն հրցատան օշնակի մեջ: Թան պեր, ասի մեր ճուղը լավը չի, թող թան խմի: Լանսերեն հաճույքով էր թան խմում: Ես նրա համար նաև սև թույթ էի հավաքում, գետափից հյուսիսի թեղ բերում: Քեղ նա երբեք չէր տեսել ու շատ սիրեց: – Յողի համ ունի, չե՞, – հարցնում էր նա: Այնքան բարի մարդ էր: Նա ինձ մի մատիտ նվիրեց՝ «Նականեչնիկով»: Դա մեր քաղաքի համար եզակի բան էր: Նկարելիս պատմում էր հեռու աշխարհների մասին: Հեքիա՞թ էր, թե՞ հրաշք...

Կեսօրին հայրս գալիս էր Կուճի ամու և «խուղոմնիկի» հետ «աբեդի»: Նստում էին ծառերի տակ, ճաշում: «Խուղոմնիկը» միայն կում-կում փորձում էր մեր ձորի հոջակավոր թթի օղին: – Բայ, բայ, – ոգևորվում էր հայրս: – Արմ, այ բալա, – ասում էր ինձ: – Գիտե՞ս ես մարդը հինջ մեծ մարդ ա՞: Սաղ աշխարհս վեճնիս տակն աստուա: Երեք օր հետո նկարը պատրաստ էր: Երբ դա դրին Կուճի ամուց բալկոնում, նորից ժողովուրդ հավաքվեց: Բոլորը զարմանքից բերանները բաց էին արել: – Տես է՞, լափ Կուճի զիգան ա, որ կա... Այո, նկարի Կուճի զիգան շատ նման էր իսկական Կուճի զիգային: Կուճի զիգան փքվել էր աշխարհով մեկ: Լանսերեն սկսեց հրաժեշտ տալ իր բնորոշուհուն, Կուճի ամուն, հորս, բոլորին: Ես

տիրեցի, որ ինձ հրաժեշտ չի տալիս, երևի բանի տեղ չի դնում: Բայց ահա նա ցույց տվեց իր փոքրիկ ճամպուրկը:

– Դե, սիրնկ: Մնացի՞ր ես ու դու. ես «չեմոդանս» վերցրու: Գուցե ծա՛նր է: Ես ցնծացի, ճամպուրկը թռչողի գետնից: Լանսերեն բոլորին նորից ու կրկին շնորհակալություն հայտնեց: Մենք ձորից բարձրացանք դեպի քաղաք: Ճանապարհին զրուցում էր հետո, հարցուփորձ անում: – Եթե գաս Մոսկվա, ապա ինձ գտի: Գուցե դու էլ «խուղոմնիկ» դառնաս, ա՞: Այս անունն բնության մեջ, այս մարդկանց մեջ ծնված-ապրողը ի ծնե նկարիչ է: Քիչ հետո ասաց. – Ձեր այս քաղաքի ու այս գյուղի մարդիկ անկրկնելի են, սիրնկ: Բնությունը անվերջ կրկնություն է, մարդը՝ երբեք: Այս մարդիկ հին նշխարներ են, կզան և Լրանց նմաններն այլևս աշխարհ չեն գա, չեն լինի: Լավ հիշիր սրանց. չմոռանաս: Եվզենի Եվզենիչն ապրում էր մեր քաղաքի հյուրանոցում: Դա Յոլուն Սեդրակինն էր, գետի մոտ, երկհարկանի շենք: Դեռ չէինք հասել հյուրանոց, երբ մեր դեմը դուրս եկավ մի բարձրահասակ, հայավարի շքեղ հագնված կին՝ վեհ ու հպարտ, կարծես լեռների թագուհի: Լանսերեն ինձ ասաց. – Ճանաչո՞ւմ ես այս կնոջը: – Դա: Ետո Մանիշակ ակեր: Ակեր: – Ա՛... Ակեր... վաղը կգաս ինձ կտանես նրանց տուն: Ես պետք է նկարեմ այս «ակեր»: Լանսերեն էլի նկարներ արեց Գորիսում: Դաթիլինի բերձերում ապրող Շալուն Արտեմին նկարեց իր կնոջ և երեխաների հետ: Հետո նկարեց Վսկանին Թամամ բաջուն:

Նկարեց նաև մեր թաղի դարբնոցը:

1960, թե 1961-ին մենք Լշեցիկը մեր համաքաղաքացի Մանիշակ Չավահիրյանի հարյուրամյակը՝ Երևանում: Նա իմ հին բարեկամ Մուրեն Բակունցի եղբոր՝ Հովհանն Եղոյի զոբանջն է: Ինձ էլ էին հրավիրել աքոր հարյուրամյակին: Գնացի: Ապրում էին Թումանյան փողոցի մի նոր շենքում: Երբ ներս մտա, շատ մարդ տեսա հրավիրված: Հարյուրամյա աքերը թագուհու պես, առոք-փառք նստած էր թախտին՝ գորգերի վրա. ես համբուրեցի նրա ձեռքը:

– Է, այ՛ նոխխա, մտի՞դ ա, որ ես խուղոմնիկին բերիր մեր տուն...

Ես ցնծվեցի: Ես դա վաղուց էի մոռացել: Աքոր աղչիկը, Եղո դայու կինը՝ Աշխենը, օգնեց ինձ.

– Լանսերեն խուղոմնիկը նկարեց մորս: Լավ հիշում եմ, այս էլ նրա նկարածը:

Պատից կախված էր Մանիշակ աքոր դիմանկարը՝ սթանչելի դիրքով, վեհ կեցվածքով: Ես ասացի, թե պետք է ստորագրություն լինի: Աշխենն այլ բան ասաց.

– Չկա: Սա բուն նկարի պատճենն է. նկարը գտնվում է Երևանի պատկերասրահում: Եղբայրս է պատճենը հանել տվել:

Հին հուշերը նորից կենդանացան: Մանիշակ աքերն ասաց.

– Իրեք օր եկը, պատկերս քաշեց: Ապրու՞մ ա, չե՞... Տախի էր: Էնքան էլ նախշուն մարդ էր...

Ահա այն, ինչ ես հիշում եմ «խուղոմնիկ» մարդու մասին, որ անմոռանալի հայտնություն էր մեր ձորերում...

\*\*\*

||



# Շախմատի մրցաշարը հասավ երկար սպասված եզրափակչին

Գորիսի Ա. Օրոյանի անվան շախմատի տանը կայացավ «Մեր ապագան» կոչվող մրցաշարի եզրափակիչ փուլը, որը դարձավ Հայաստանում ավելի քան 500 շախմատիստի մասնակցությամբ անցկացվող շարքի եզրափակիչը:

Միջոցառումը կազմակերպել էին Հայաստանի շախմատի ակադեմիան և «Մեր ապագան» կրթամշակութային բարեգործական հիմնադրամը: Մրցաշարին մասնակցում էին ևսև «Մեր ապագան» հիմնադրամի գործադիր տնօրեն Վահրամ Կարապետյանը և Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր տնօրեն Սմբատ Լպուտյանը: Նրանք ողջունեցին մասնակիցներին և նշեցին մրցաշարերի կարևորությունը մարզերում շախմատի զարգացման և հասարակական-մշակութային կյանքի աշխուժացման համար:

Մրցաշարի բացման արարողությանը մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին հանկարծամահ եղած ազարակցի մարզիչ Պետրոս Մանուկյանի հիշատակը:

Մասնակիցներն ապացուցեցին, որ իրենք շախմատի իսկական վարպետներ են՝ դրսևորելով ոչ միայն ռազմավարական մտածողության հմտություններ, այլև կենտրոնացվածություն: Յուրաքանչյուր մենամարտ իսկական ինտելեկտուալ մարտ էր, որին հանդիսատեսը դիտում էր շունչը պահած: Լարվածությունն իր զագաթնակետին հասավ, երբ հայտարարվեցին եզրափակչի հաղթողների անունները՝ **1-ին տեղ՝ Ալեքս Ալեքսանյան, 2-րդ տեղ՝ Վարդան Մովսիսյան, 3-րդ տեղ՝ Վաչագան Շեգունց, 4-րդ տեղ՝ Արթուր Խոջաբաղյան:**

Եզրափակիչ փուլի հաղթողները բազմաթիվ տպավորությունների հետ մեկտեղ ստացան մրցանակներ:

«Մեր ապագան» հիմնադրամի գործադիր տնօրեն Վահրամ Կարապետյանը նշեց՝ «Գորիսում կայացած եզրափակիչը ոչ միայն մրցաշարի եզրափակիչ փուլն էր, այլ Հայաստանում շախմատային շարժումը զարգացնելու ցանկության խորհրդանիշը: Մենք հպարտ ենք,»



**որ այս մրցաշարը համախմբեց մասնակիցներին ամբողջ երկրից՝ տալով նրանց մրցակցային ոգի և արժեքավոր փորձ ՖԻԴԵ-ի կողմից՝ որպես շախմատի համաշխարհային օլիմպիադայի շրջանակում դարի լավագույն թիմ»:**

Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր տնօրեն Սմբատ Լպուտյանը հավելեց. «Մրցաշարերի շարքն ընդգրկել է Հայաստանի տասնյակ բարձրագույն և մարզեր՝ ներգրավելով հարյուրավոր տաղանդավոր շախմատիստների: Այս եզրափակիչը ևս մեկ անգամ հաստատում է, որ Հայաստանում շախմատի նկատմամբ հետաքրքրությունն աճում է և խաղացողների մակարդակն արագորեն բարձրանում է»:

Գորիսում կայացած եզրափակչին ներկա է գտնվել և ողջույնի խոսքով հանդես եկել ՌԴ ԱԳՆ առաջապահ խմբի ղեկավար Սերգեյ Զաչիխինը: Նա շնորհավորեց հաղթողներին, մարզեց հետագա հաջողություններ և ընդգծեց շախմատի կրթության կարևորությունը՝ նշելով, որ շախմատը կարևոր դեր ունի

Հայաստանի բոլոր դպրոցներում:

Այս մրցաշարը վառ էջ դարձավ Հայաստանի մարզերի շախմատային կյանքում, բայց մենք դրանով չենք սահմանափակվում: Առջևում նոր մրցաշարեր են, հետաքրքիր խաղեր և նոր հանդիպումներ շախմատի խաղատախտակին:

Ֆիչեցենք, որ Հայաստանի շախմատի ակադեմիայի և «Մեր ապագան» կրթամշակութային բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպված մրցաշարերն անցկացվել են յոթ մարզում և տասը բնակավայրում:

Մարզերն են՝ Սյունիք, Լոռի, Արմավիր, Տավուշ, Գեղարքունիք, Վայոց ձոր, Կոտայք: Բնակավայրերն են՝ Կապան, Մեղրի, Քաջարան, Վանաձոր, Արմավիր, Գորիս, Իջևան, Մայիշկա, Զրազդան:

Մրցաշարն անցկացվել է շվեյցարական ձևաչափով՝ 11 տուրով՝ ՖԻԴԵ-ի շախմատի կանոններով: Ժամանակացույց՝ 5 րոպե ամբողջ խաղի համար + 3 վայրկյան յուրաքանչյուր քայլի համար՝ սկսած առաջինից:

**ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՄԱՐԻԱՄ ԼԱՉԱՐՅԱՆԻ**

# Այս տարվա նոյեմբերին Գորիսում կանցկացվի շախմատի միջազգային խոշոր մրցաշար

Սկիզբը՝ էջ 3

դասարաններում դասավանդել շախմատ առարկան: **– Ինչպե՞ս եք լուծում կադրային կամ մարզչական հարցը:**

– Այստեղ մարզչական խնդիր չկա, կա մանկավարժների խնդիր: Շախմատի ակադեմիայի և Գիտահետազոտական ինստիտուտի հետ տարեկան 2-3 անգամ վերապատրաստումներ ենք իրականացնում, այսօր էլ վերապատրաստումներ են ընթանում Շիրակում: Այդ երկու կառույցները համատեղ իրականացնում են, հավատացե՛ք, զգալի աշխատանք: Ամեն մի վերապատրաստում տարբերվում է նախորդից: Ամեն վերապատրաստումից հետո հետադարձ հայացք ենք ձգում, և քննարկումները հնարավորություն են տալիս ավելի տեսնել ու ավելի ճիշտ մոտեցում ցուցաբերել, որն ավելի արդյունավետ է դարձնում հետագա վերապատրաստումները:

**– Կարո՞ղ ենք փաստել, որ դպրոցներում լուծված է մանկավարժ կադրերի հարցը:**

– Փորձում ենք լուծել՝ որքան հնարավոր է, թեև դա շատ բարդ խնդիր է: Կուզենայինք վերապատրաստումների հարցում ավելի մեծ աջակցություն ստանալ, քանզի դա բավականին ծախսատար գործընթաց է:

**– Ժամանակին Գորիսում բացվեց շախմատի դպրոց, որի հիմնադիր տնօրենը Տիգրան Գրիգորյանն էր, դպրոցն Ալբերտ Օրոյանի անունով կոչվեց...**

**Տարօրինակ է, որ այդ դպրոցն իրավաբանական անձի կարգավիճակից դարձավ մարզադպրոցի ստորաբաժանում: Ոլորտի մասնագետներն այդ միավորումն արհեստական են համարում, ոչ օգտակար: Ձեր կարծիքը:**

– Կարծում եմ համայնքային խնդիր է...

Բայց դպրոցի հիմնադրման գործընթացին մասնակցություն են ունեցել ժամանակին:

**– Շախմատի ոլորտում Հայաստանը ժամանակին շատ մեծ համբավ է ունեցել... Ի՞նչ վիճակում է հայկական շախմատը, եթե ոլորտը դիտարկենք աշխարհի մասշտաբով:**

– 2024 թ. օլիմպիական խաղերն անցկացվեցին Բուդապեշտում՝ ՖԻԴԵ-ի 100-ամյակն էր: Բարձրաձայնվեցին այդ տարիների լավագույնների անունները: Հայաստանի թիմը լավագույնների թվում առաջինն էր: Զգիտե՛մ՝ այդպիսի նվաճում երբևիցե կունենանք, թե՞ ոչ: Բազմաթիվ երկրներ ավելի մեծ հնարավորություններ ունեն՝ ևսև մարդկային ու տնտեսական ռեսուրսների տեսակետից՝ Զինաստան, Յնդկաստան, ԱՄՆ, Ռուսաստան... Իսկ մենք՝ 2,5-3 մլն բնակչությամբ շատ շանքեր պետք է գործադրենք, որ մասնաբաժնի բարձր դիրքերում:

Այո, անչափ մեծ աշխատանք և միասնական գործունեություն է պահանջվում, որպեսզի պահպանենք այն, ինչին հասել ենք:

**– Նախկինում շախմատի ոլորտում ունեինք պարբերական մամուլ, հեռուստահաղորդումներ, իսկ հիմա՞...**

– Վեց-յոթ տարի առաջ երեք-չորս հեռուստաընկերություն հաղորդաշարեր ունեին, շախմատի դասընթացներ էին անցկացվում, շախմատի վերաբերյալ թողարկվում էր հեռարձակում... Ինչպե՞ս է:

– Շախմատը չի կարող հետաքրքիր չլինել, շատ եմ ավստում, որ հեռուստաընկերություններում շախմատի մասին հաղորդաշարեր այս պահին չունենք:

**– Որպես մեր գրույցի ամփոփում՝ կուզենայինք Ձեր կարծիքը լսել շախմատի վերաբերյալ:**

– Շարունակում եմ համարել, որ շախմատը կրթական համակարգի կարևոր մաս է կազմում, ամեն տարի 40 հազար երեխա է շախմատ խաղալ սովորում, 13-14 տարվա մեջ՝ 600 հազարից ավելի երեխա, չհաշված ծնողները:

**– Շնորհակալություն գրույցի համար:**  
**ՉՐՈՒՅՑԸ՝ ՄԱՐԻԱՄ ԼԱՉԱՐՅԱՆԻ**

**Սյունյաց Երկիր**  
ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԴԱՏԱՍԽԱՆԱՏ-ՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏԴԱԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
**Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵՆ ԱՆԷՏԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47  
syuniacyerkir@mail.ru  
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Ելույթները ներկայացնելու մեքենագիր վիճակում:  
«ԳՐՎԱԾԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:  
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Թե՛ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք  
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 04.04.2025թ.: